իմաստունն էլ չէ իմացել: Եթէ ես լաւ վարժապետ չլինէի, սրբազան առաջնորդը, նորին վսեմութիւնը, փաշան, ինձ այնքան պատիւ չէին տայ: Տեսնո՞ւմ էք այդ աշակերտներին, որ հիմա երգում էին, այս գիշեր պէտք է տանեմ առաջնորդարանը, որ այնտեղ երգեն: Սրբազանը խնջոյք ունի, փաշան էլ այնտեղ կը լինի:

Բոլորը զարմացան: Բայց նրա զզոելի պարծենկոտութիւնը ինձ բոլորովին վրդովեցրեց, ես հեռացայ: Նա դեռ շարունակում էր խօսել բազմութեան հետ:

Պատոելիի շարժական դպրոցից մի քանի քայլ հեռու, իր տան դռան հանդէպ, արաղի կաթսան սարքած, այգետէրը արաղ էր քաշում: Այդ կաթսաները պատկանում են առանձին մարդիկների, որոնք վարձով են տալիս եւ ստանում են քաշած արաղի մի մասը: Մեծ այգետէրերը միայն ունեն սեփական կաթսաներ: Սիմոն պատոելին երբեմն մօտենում էր այդ կաթսային եւ, արաղը տաք-տաք իր կոկորդը ածելով, ասում էր. — «հիմայ աւելի թունդ է»: Կարծես նա մի չափ լինէր, որով այգետէրը անդադար փորձում էր արաղի թնդութեան աստիճանը:

Իմ բռնած փողոցով աւելի ու աւելի առաջ գնալով, ես աննկատելի կերպով դուրս եկայ բնակութիւններից եւ յայտնուեցայ մի արհեստական լճակի մօտ, որի մէջ հաւաքւում է աղբիւրների ջուրը եւ հերթով բաժանւում է այգիները ոռոգելու: Ամբողջ լճակը, մի հսկայական կաթսայի նման, եփ էր գալիս, փրփրում էր: Բազմաթիւ գլուխներ յայտնւում էին եւ դարձեալ սկսում ջրի տակ: Գիւղացի մանկտին լողանում էր: Մի քանիսը նրանցից, յոգնած, թուլացած, իրանց մարմինը կիսով չափ թաղել էին ափերի խոնաւ եւ սառն աւազների մէջ, որ արեգակը չայրէ: Տղայ եւ աղջիկ լողանում էին միասին: Դրանք այն պարզ, միամիտ, նահապետական ժողովրդի զաւակներն էին, որ միմեանցից չէին ամաչում: Երբ ես մօտեցայ, կարծես մի յորդ անձրեւ տեղաց իմ վրայ: Չարաճճիները սկսեցին ամէն կողմից ջուր սրսկել, մէկը բերանով, միւսը ափերով, երրորդը ջրի երեսին լողացող ձմերուկի կեղեւներով: Ես իսկոյն հեռացայ, բայց կոյր հաւի նման, ոտքից ցգլուխ թրջուած: Այնպէս չէի ուզում տուն վերադառնալ, որ վարպետ Փանոսի աշակերտներին իմ վրայ չծիծաղեցնեմ: Նստեցի մի ծառի տակ, որ յագուտս փոքր-ինչ չորանայ:

Իմ շուրջը տարածւում էին մշակուած դաշտեր. բոստանների մէջ հասունացած սեխը, խարբուզակը աչք էին շլացնում. արտերն արդէն շատ տեղերում քաղուած էին եւ ահագին դէզերով կիտած. գիւղացի երկրագործը մեծ փութով բարձում էր ծանր խուրձերը իր սայլակի վրայ, կապում էր կաշեայ հաստ ճոպաններով եւ կրում էր դէպի կալը կալսելու համար: Նրա երգը նոյն-